



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ատեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17349

№ 80

Վ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՈՐԴՈՒՆ

ԹՈՒԽՑԻԿ ԱԿՆԱՐԿ

Հրատ.

Հ. Յ. Պաշմակցուրեան

1924

ԺՐՆԱՎ.

323.1(47.925)

G-38

24

C-38

12 MAR 2011
3/3
opt

Գ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՈՐՄԱՆ

ԹՈՒԻՑԻԿ ԱԿՆԱՐԿ

2645

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ST. NERSES SENORHALI

L I B R A R Y

ARMENIAN PRELACY

Հրատ.

1924

Հ. Տ. Պաշտամուրեան

ԺԲՆԵՎ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՄԵՆԻԱՆ

մասուրացար վկայաւողեցաց մեջ ունի մասնաւոր գործություն ունար մեջ մահապատճենաց բարեւուղար և ալեւ մահապատճենաց բախախսաւորաւուն մազն ուղիղ դաշտամահասա ցւայքառութեամից մէջ առանց նոր աօժն դժմափոքրու և եւանց շատ առաջապատճեամի և անձնական բարեւուղաւութեամի և անձնական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

(Տեսական նիմնաւորման
բռուցիկ ակնարկ)

1848. ին, սրանից, ուրեմն, ընդամէնը 76 տարի առաջ, Մարգար ու Էնգէլսը «Կոմմունիստական Մանիքէստ»-ի մէջ շփոթելով հայրենիքի և ազգութեան հետ կապուած մի շարք գաղափարներ, գրում էին, ի միջի այլոց, հետեւ առաջը.

«Կոմմունիստաներին մեղադրում են նաև նրան մէջ, թէ նրանք կամենում են ոչնչացնել նայրենիքը, ազգուրինը: Բանուորները նայրենիք չունեն: Նրանցից չի կարելի խլել այն, ինչ նրանք չունեն: Անկասկած պրոլետարիատը պէտք է նախ եւ առաջ տիրանայ բաղարական բովանդակ իշխանութեան, հասնի ազգային գերիշխան դասակարգի բարձրութեան եւ ինքն իրեն կազմակերպի իբրեւ ազգ, — եւ այս իմաստով նա տակամին կապուած է ազգութեան: Բայց ոչ բուրժուական իմաստով:



1391-2011

«Արդին բուրժուազիայի զարգացումն ինք-
նին . ազատ առևտուրը , համաշխարհայնա-
ցումը եւ արտուդրող արդինաբերուրեան եւ
նրան համապատասխանող զոյուրեան պայման-
ենքի միանմանուրինը աստիճանաբար ոչնչա-
ցնում են ազգուրիննենքի միջեւ եղած սահմա-
նագծումներն ու հակամարտուրինները» : *)

Այս կտօրի մէջ արծարծուած մտքերով
Մարքսն ու Էնդէլսը ուզում էին ասել , «Ո
երբ համամարդկային ընկերվար ուսմունքը
պրոլետարիատի պայքարի գնով իր վերջնական
յաղթանակը տնօէ , այն ժամանակ այլևս
ոգասակարգային» ազգութեան մասին խոսք չի
լինի և ապագայ մարդկութիւնն ու հասարա-
կարգը կ'ունենան ապագասակարգային , ա-
կալարգը պայգային , որ ասել է՝ համամարդկային ընոյթ
պայզային , որ ասել է՝ համամարդկային ընոյթ
ու կերպարանք , Այս տեսակէտը նրանք հիմ-
նաւորում էին , ինչպէս տեսանք , նաև ալն-
տեսական տուեալներով , յայտարարելով , թէ
ազգային բաժանումներն ու հակամարտու-
թիւններն արդիւնք են անխուսափելիօքն
կենտրոնացման ձգտող , իսկ այժմ բաժան-բա-
ժան , ապակենտրոն ու մասնատուած տնտե-
թեանց :

Ուղղափառ և ամենազօր «կենտրոնացու-
մը» յետագային պիտի գար ընդմիշտ խորտա-

*) Karl Marx et F. Engels . «Le Manifeste
Communiste . Փարիզ , էջ 50 .

կելու տնտեսական պատնէշները , ստեղծելու
մէկ կուռ , հզօր եւ ամբողջական տնտեսական
կասուցուածք , որի հարուածների տակ պիտի
գոլորշիանալին ամէն կարգի (ու նաև , ի հար-
կէ , ազգային) տարբերութիւններն ու հակա-
մարտութիւնները :

Այսպիսով , հայրենիքի հասկացողութիւնը ,
որ օկսուում է ո՛չ միայն տնտեսութեամբ ու
չի վերջանում միայն տնտեսութեամբ . ազ-
գութեան գաղափարը , որ ինքնին մի բաւա-
կան բարդ բնակութեամբ ական շա-
ղախ է ու չի պարփակում Մարքս-Էնդէլսեան
չոր ու ցամաք կօնցեպցիաների շրջանակում ,
—ահա այդ հասկացողութիւններն ու գաղա-
փարները գիտական սոցիալիզմի հիմնադիրնե-
րը կապեցին ժամանակաւոր կեանք ունեցող
տնտեսակարգի հետ , այդ հասարակակարգի
մահուան հետ մէկտեղ նախատեսելով նաև
նրանց մահը :

Նոյն թուականին (1847) Մարքսը գրում է
իր «համբաւաւոր» ու թունալից յօդուածը ա-
ւուրարիական սլաւոնների մասին , զէմ արտա-
յայտուելով նրանց անկախութեան (եւ յատ-
կապէս չեխերի) նաև նրա համար , որ այդ ազ-
գերը 12—20 միլիոն միաձոյլ և կոմպակտ թիւ
չունեն , նա նախատեսնում էր , որ մօտակայ
համաշխարհային պատերազմը պիտի գալ ու
պիտի որքի բոլոր «խղճուկ» , «անօդնական» ,
«եղագլուխ» և «ռէակցիոն» ազգերը (սլաւոն-

ների հասցէին), հարթելով նանապարհը հըզորների և ուղղափառ «կենտրոնացման» առջեւ։ Ու նա բնաւ չէր քաշում թունալից հեղնանքով յայտարարելու թէ երբ «գոգման» պահանջում է զօներ, ապա պիտի դնալ այդ զոհարերութեան ու պիտի արորել նաև «մի քանի ազգային քնքոյշ ծաղիկներ»։

1860 ին, սրանից, ուրեմն, ընդամէնը 64 տարի առաջ, նոյն Մարքսը օրհնում էր Գերմանիոյ պատերազմը Դանիոյ դէմ, նուիրագործելով պրուսացու «յեղափոխական» աշխարհակալութիւնը և ողջունելով փոքր Դանիոյ ոչնչացումը։

Մարքսի և ինգելսի անմիջական աշխակրտներից Լիբլինեխտը (Հայրը) 1892-ին, սրբանից, ուրեմն, ընդամէնը 32 տարի առաջ, Մարսէյլում արտասանած իր նշանաւոր ճառի մէջ յայտարարում էր, որ մարքսիստները միայն երկու ազգ գիտեն՝ կեղեգողների ու կեղեգողների, որոնցից երկրորդին պատկանում են իրենք։

Եւ մինչև իսկ զգոյշ կառուցկին ազգութեան հարցին նույրած իր անդրանիկ ուսումնասիրութեան մէջ («Փամանակակեց ազգութիւնը» խորագրով) այս կարծիքն էր յայտնում, որ ազգութիւնը արհեստական կազմութիւն ունի, որ նա ծնունդ է մասնատիրական տնտեսութեան և որ, հետեւար, այս ազնատեսութեան վերացման հետ պիտի վերանան-

նաև այդ մանր ազգերը, միանգամ ընդմիշտ ձուլուելու համար խոշօր ու միաձոյլ միութիւնների մէջ։

Իսկ գեռ երէկ էր, որ հսկայածաւալ Ռուսաստանի մէջ, մարքսիզմի ուղղափառ հետեւորդները, ուստի սոցիալ-դեմոկրատները, մանր ազգերի համար ապրելու ուրիշ շնորհ չտւնեին, բայց եթէ անգոյն, անմիս, անարիւն ու անորոշ «կուլտուրական ինքնավարութիւնը»։ Ռուսական մարքսիստական այս անցագիրը, պատրաստուած փոքր ազգերի համար, «կուլտուրական ինքնավարութեան» սահմանից այն կողմը թոյլ չէր տալիս անցնելու Ռուսիոյ ստորագաս ազգերից գրեթէ ոչ մէկին։

Սյապէս—երէկ, ընդամէնը մի քանի տասնամետ առաջ։

Ու սակայն այսօր, ընկերվարական բովանդակ աշխարհի մէջ, բոլոր երկրներում ու ամէն հորիզոնների տակ չէք գանի և ո՛չ մէկին, որ յանդգնէր բացայալորէն դէմ արտայայտուելու ազգութեանց ուրան գոյութեան և նրանց անկախութեան երազին։

Այսպիսի ջախջախիչ լաղթանակ և այն էլ այսքան կարծ ժամանակաշրջանում՝ չի վաստակել հանրային թերես և ոչ մի գաղափար։

Ազգութեանց լաղթական երթի առջև ջախջախուած փուռած է մարքսեան չարագուշակ տեսութիւնը և նրա աւերակների վը-

բայ այսօր խրոխտ կեցուածքով ցցուած են
փոքր ազգութեանց ազատութեան և անկա-
խութեան մի շարք հրաշակերտ շէնքերը (ու
նաև . . . չեխերի) :

Համաշխարհալին պատերազմը պիտի դար
ու պիտի սրբէր, ըստ Մարքսի նախատեսու-
թեան, բոլոր «խղճուկ»՝, «անօդնական»՝, «ե-
զագլուխ» ու «ռէակցիոն» ազգերը, պիտի
դար ձուլելու նրանց հզօրների ամենակուլ
խառնարանում, սակայն այդ պատերազմը ե-
կաւ ու, հակառակ Մարքսի, սրբեց ու տա-
րաւ մեծերից շատերին, նրանց սրբազան ա-
ւերակների վրայ կառուցանելով «խղճուկնե-
րի» և «անօդնականների» ազատութեան հո-
յակապ կոթողը :

Ու մտածել թէ մինչև մեծ պատերազմը,
միայն Եւրոպայում, կային լիսուն եւ վեց ինք-
նիշխան երկրներ, իսկ այսօր, պատերազմից
յետոյ, այդ նոյն Եւրոպայում նրանց թիւը
հասնում է արդէն եօրանասուն եւ վեցի:

Այսպիսի ջախջախիչ յաղթանակ, մի ան-
դամ էլ կրկնենք, պատմութեան մղիչ ազ-
դակներից և ոչ մէկն այսքան արագործն թե-
րեւս չի տարել.

Սկզբ՝, համարձակ կարելի է ասել, որ ըն-
կերպար մարզկութեան շարքերում չկայ ալես
մէկը, որ արիութիւնն ունենայ բացակատ
դէմ դուրս գալու ազգութեան գաղափարին,
չկայ մէկը, որ համարձակութիւնն ունենայ

ժխտելու ազգութեանց նուիրական տենչան-
քը, նրանց անկախութեան պահանջը :

Հարիւրաւորների անունները կարելի է
յիշատակել, անվերջ էջեր գրաւելով, որոնք
փոխադարձ մրցակցութեան մէջ են աւելի՛
յուղիչ, աւելի ազգու, աւելի՛ վեհ ու վաս
խօսքերով հիմնաւորելու համար ազգութեանց
յարատեւթեան գաղափարն ու նրանց նուի-
րական երազը՝ ապրել ազատ, ինքնիշխան եւ
անկախ:

Տասնեակներով կարելի է թուել այսպիսի
կուռ ու հզօր քաղաքական հոսանքներ, ո-
րոնք երէկ ժխտելով ժխտում էին այդ գաղա-
փարները, իսկ այսօր պաշտպանելով պաշտ-
պանում են և ազգն ու ազգութիւնը, և՝ հայ-
րենիքն ու նրա անկախութիւնը :

Բացայայտ հակառակորդներն ու թշնա-
մրները մնացել են այն բանակում միայն, որ
ընկած է մարզկութեան երազած հասարակա-
կարգի այն կողմը, յառաջադիմութեան սահ-
մաններից գուրս, յետագէմ ու մթին գաղա-
փարների խաւար աշխարհում, Գծից այս
կողմը գտնուած հակառակորդը պայքարում
է այլկո ո՛չ ուղղամիտ, ո՛չ բացայայտ, ո՛չ
շիտակ ու բացնակատ ձեռվ, այլ քողարկ-
ուած, կեղծ ու չպարուած վիճակի մէջ :

Մարքսեան յանդզնութիւնն ալլես չկայ:
Կարո՞ղ էք թուել մի այլ գաղափար, որի
յաղթանակն այսքա՞ն վճռական, այսքա՞ն ան-

վերապահ ու վերջնական լինէր,

Կարո՞ղ էք յիշատակել արգեօք որևէ ձգտում մարդկային պատմութեան մէջ, որի առջև խուճապահար տեղատութիւնն արդքան հոյակապ լինէր և այն էլ . . . այսքան կարծատե շրջանում:

Դեռ երէկ, մի քանի տասնամեակ առաջ, ազգութիւնն իր նորագոյն առումով խորթ էր, անհաղորդ ու անհարազատ գիտութեան ու պայքարող մարդկութեան մէկ ամբողջ հասուածին:

Դեռ երէկ, մի քանի տարի, մի երկու տասնամեակ առաջ, հետնանք կարող էր յարուցել անկախ երկրների այն հոյակապ փունջը, որ այսօր երկունքով, արիւնառատ պարգարի և աննախընթաց փոլոզումների գնով հիւսւում է գեղեցկօրէն հզօրների խնկելի աւերակների վրայ:

Ազգերը, որ *XII-րդ* դարից սկսած մի առանձինն թափով կազմաւորւում ու գունաւորում են մարդկային պատմութիւնը, այսօր այլևս գարձած են այդ պատմութեան մղիչ ու հոյակապ ազգակներից մէկը:

Այս բացայայտ ձշմարտութիւնն ըմբռներու համար պէտք չկայ անպայման մարդկային պատմութեան բոլոր հատորները գիտնալու:

Մաքի թոփչքով գծեցէք ձեր տեսողութեան առջև աշխարհի քարտէզը երկու, մէկ

զար առաջ ու գուշ պիտի տեսնէք, թէ այդ քարտէզը որքա՞ն գունեղ, որքա՞ն երփներանգ է գարձել վերջն երկու հարիւրամեակների ու ժան աւանդ *XIX-րդ* դարու ընթացքում:

Միթէ անխորհուրդ է այս հոյակապ երեւոյթը: Խմաստ չկայ արդեօք այն շրեզ շարժման մէջ, որ դէպքից դէպք ու փաստից փաստ գալիս է փայլ տալու մարդկային պատմութեան, Զէ՞ որ երկնաբեր չեն ազգերը, չե՞ր մոլորակից ու մե՛ր աշխարհից, խորարմատ ձեռվ ու տարբեր գոյներով ձգուած պատմութեան մէկ ծայրից մինչեւ միւսը:

Երկու հակամարտ ու իրերամերժ գործններ անընդհատ, անողոք ու արիւնալի պայքարի մէջ են եղել փոխազարձաբար ու գրեթէ պատմութեան ամբողջ տևողութեան ընթացքին: Այդ երկջոկուած գործոններից մէկը ձգտել է տէր կանգնել ամբողջ աշխարհին, բոլոր բերանների մէջ մէկ լեզու դնել ու բոլոր ձեռքերի մէջ մէկ գրիչ պահել, տեսնել աշխարհը, ողջ մարդկութիւնն ի՞ր լեզով խօսելիս և ի՞ր աստուածներին երկրպագելիս: Ու դրան զուզընթաց աճել ու զարգացել է երկրորդ գործնը, տրամադծօրէն հակառակ առաջինին, որ ձգտել է հնարիմաց բոլոր ձեւերով պահել պատմութեան ստեղծագործ ուժերը, բոլոր լեզուներն ու բոլոր ազգային գոյները:

ամենքին իր սեփական անկիւնը տալով և
իւրաքանչիւրին ազատ պահելով հզօրների աշ-
խարհակալ ռտնձգութիւններից :

Դժուար չէ ասել, թէ այս պայքարը մըր-
ցակցող ռւժերից ո՞ր մէկի յաղթանակով պի-
տի վերջանայ :

Այս հարցին պատասխանում է ինքը պատ-
մութիւնը :

Յանուն աշխարհակալութեան մղուած իւ-
րաքանչիւր մէկ նոր ու միթխարի բաղսում,
յանուն նոր տիրապետութեան տարուած
իւրաքանչիւր մէկ պայքար, ամէն մէկ բըռ-
նակալ ձգուում տիրանալու նորանոր երկրների
ու ստրկութեան մասնելու համար նոր ու ա-
զատ ժողովրդների վերջացել ու վերջանում
են ստրազաս ժողովրդների անակնկալ ազա-
տութեան գնով :

Ու պիտի վերջանան այդպէս :

Որովհետեւ անկարելի է ճշմարիտ խաղա-
ղութիւն հաւատաել մեր մոլորակի վրայ, և
թէ մինչեւ իսկ բովանդակ տիեզերքը սեփա-
կանութիւնը դառնայ միայն երկու մեծ ու
հզօր ազգերի, Ո՞վ կարող է կասկածել, որ
հզօրութեան զաղանի ծալքերի տակ թափնը-
ւած անհանգիստ, անյագ ու արիւնուշտոր-
դըն այս երկու ուժերը գուրս չպիտի բերի
մէկ նոր ու անեղ պայքարի՝ յանուն միայն
մէկի անսանձ, անսահման, անմրցակից տի-
րապետութեան :

Աորամուխ եղէք պատմութեան ներքեն-

իմաստի մէջ, փորձեցէք լօել նրա սրբազան
ձայնը, հասկանալ այն խորհուրդը, որ իր
մէջ կրում է անազատ ազգութեանց կանթե-
զակիր պայքարը ու գուք պիտի տեսնէք, որ
ուրիշ ընթացք, զարգացման այլ ուղի մարդ-
կային պատմութիւնը չունի:

Համայն աշխարհը կամ պիտի թողնել
միայն մէկին, կամ բոլորը տէր պիտի կանգ-
նեն այն ստացուածքին—նիւթական ու ոչ-
նիւթական—որ ազգերը կուտակել են անյի-
շատակ ժամանակներից սկսած :

Կամ գարշ բռնակալութիւնը—այս կամ
այն գոյնի տակ քօնարկուած—իր անարդ հո-
գանին պիտի տարածի տիեզերքի բոլոր ցա-
մաքների ու բոլոր ջրերի վրայ, կամ ազատու-
թեան արևը հաւատարապէս պիտի լուսաւորի
ազգերի—ու անխոտիր նրանց բոլորի—ազատ
ու անկախ հայրենիքները :

Ու պատմութիւնն ահա այս վերջին ճա-
նապարհով է գնում :

Անկարելի է երեակայել աւելի հզօր, ա-
ւելի անյազթահարելի, աւելի յամառ ու տի-
ւական մէկ ոյժ, քան ազատութեան տենչն
է, Նրա մահացու հարուածներին չգիմացաւ եւ
ոչ մէկ աշխարհակալ, որովհետեւ և՛ ոչ մէկը
բռնաւորներից չունեցաւ երայրքոտ պայքարի
արն անմար կրակն իր մէջ, ինչ ունի ազատու-
թիւնը, նա բնատուր է ազգերին, ինքնածին
ու ինքնարուխ, նա հօգեկան այն անսպառ

գանձն է, որ փոխանցւում է դարերից դար ու սերնդից սերունդ, առանց երբեք իր հըմալիքն ու թովզութիւնը կորցնելու:

Չոհերի և ոչ մէկ թիւ, արեան և՛ ոչ մէկ քանակ, աւերածութեանց և՛ ոչ մէկ օրինակ չի կարող ազգերն անջատել ազատութեան կուսքից:

Եւ ինչո՞ւ հեռուներ գնալ:

Ահա ձեզ հայ ժողովուրդը, Նրա ամբողջ պատմութիւնն անսպաս պայքարների մի ընդարձակ մարտիրոսազրութիւն է... յանուն ազատութեան: Բազմիցս հարուածուած, ծրւատուած ու արիւնոտուած, նա վերսախն ամփոփել է իր ցիրցան ուժերն ու լարուած նիւզերով պարզել պայքարի դրօշը: Մօտ եօթ դար է, ինչ ազատութեան արևը մարել է հայկական հողերի բոլոր մասերի վրայ: Եօթ դար է, ինչ բռնակալները փոխն ի փոխ դարիս, իշխում, աւերում ու սրածում են, ձգտելով քարը քարի վրայ չթողնել մեր հայրենիքի մէջ:

Անվերջ սերունդներ եկել ու անցել են, առանց ազատութեան շողը տեսնելու: Սակայն և այնպէս ազատութեան տեսնչը երրեք չի մարել մարանչող հայութեան հոգում: Ու մինչև իսկ այսօր, երբ նա բնաջնջուած է գըրբեթէ իր մէկ հատուածով, երբ աւերակ էնքրա հայրենիքն ու օտարութեան ափերը դարձած են իր անհաստատ կայանը, ահա մինչեւ

իսկ այսօր չի խորտակուել նրա մէջ պայքարի ոգին, չի մարել ազատութեան կրակը:

Այսպէս են և մնացած բոլոր ժողովուրդները:

Տարբեր չափերով, սակայն ամենքն անխափիր երկրպագուն են այն մշտավառ կրակի, այն հզօր արքայի, որ ազատութիւն անունն է կրում:

Եւ այսօր այդ պայքարը տարւում է աշխատաւոր մարդկութեան լուսաւոր գաւանանքի, ընկերվարութեան զրօշի տակ:

Մեր յօգուածի սկզբում ասացինք, որ ընկերվարական վարդապետութիւնն իր հետեւորդների շարքերում մարդ չունի արձանազբած, որ յանդգնէր բացայայտօրէն գէմ գուրս գալու ազգերի անկախութեան երազին:

Անվերագարձ կերպով պատմութեան սեփականութիւնն են դարձել այն հեգնալից բանդագուշանքները, որ ինգելոն ու Մարքսը, ու մանաւանդ նրանց ուսւ հետեւրդները չարախինդօրէն նիւթել էին ազգութեանց և յատկապէս նրանց անկախութեան երազանքների գէմ:

Ընկերվարութիւնն սստիճանաբար յզերւում, ճշարոշւում ու պարզուում է, վերջնականապէս իւրացնելով ազգութեան և հայրենիքի զաղափարները և դարձնելով այն իր անբաժան մէկ մասը:

Եւ եթէ այսօր տակաւին կան ուժեր, ու-

ըոնք, պատսպարուած ընկերվարութեան դրօշի
տակ, անկարող են հաշտուել փոքր ժողովրդ-
ների ազգային գատերի հետ, ապա զրանք այն
մեռնող ուժերն են, որոնք իրենց ժամանակա-
ւոր գոյութիւնը կարող են քարչ տալ միայն
ծալտեալ վիճակում։ Այդ հոսանքներից և՛ ոչ
մէկն այլես արիութիւնը չունի ընկերվարու-
թեան քզամիդն իր ուսերին առնելու և միա-
ժամանակ բացայայտօրէն ազգութեանց ան-
կախութեան դէմ խօսելու։

Ընկերվարութիւն, հայրենիք և ազգու-
թիւն, — այս գաղափարներն այլես մէկ ան-
բաժան ամբողջութիւն գարձած են թէ՛ կեան-
քի ու թէ՛ տեսութեան աշխարհում։

Եւ այն հանգամանքը, որ ազգութեանց
դէմ նիւթած զաւերը ծնունդ են առնում
միթութեան մէջ, սարսափում լուսից։ ծածկը-
ւած մնում կեղծ ու պատիր խօսքերի տակ եւ
արտայայտում զօղունի, խարդախ ձեւերով, —
այդ ինքնին արդէն մատնում է պայքարողի
յուսահատ դիրքերն ու նրա լիակատար պար-
տութեան անվերադարձ վճիռը։

Այսպիսով, ընկերվարական ուսմունքը, որ
իր սկզբնական շրջանին, մարքսիզմի հզօր ազ-
դեցութեան տակ, ազգամերժ, անմիտ ու ա-
նարիւն գաւանան քն էր մարդկութեան մէկ
աննշան տոկասի, գործարանային բանուորու-
թեան, այսօր, կեանքի ու զիտութեան եր-
կաթեայ հարուածների տակ փոխել է իր բը-

նոլիթը, փարթամացել իր ներքին էութեամբ
և գարձել աշխատաւոր բազմութիւնների հա-
սարակական գաւանանքը։


Այլևս վէճի խնդիր չէ, որ ընկերվարու-
թիւնը պիտի կրի ոչ միայն ինգուստրիէլ,
գործարանային բնոյթ, այլ և պիտի ունենայ
բացայայտօրէն արտայայտուած երկրագործա-
կան կերպարանք։

Այս կը նշանակէ, որ ընկերվարութիւնն
իր յազթանակը պատրաստող ուժերի շար-
քում պիտի ունենայ ոչ միայն բանուորին,
այլ և աշխատաւոր գիւղացուն։ Այս կը նշա-
նակէ միաժամանակ, որ ընկերվարական ուս-
մունքը նպատակ պիտի ունենայ բոլորանը-
ւէր ձեռվ պաշտպանելու աշխատաւոր մարդ-
կութեան և ոչ միայն գործարանային բան-
ուորի շահերը։

Սակայն այս — հարցի միայն մէկ կողմն է։

Ընկերվարական վարդապետութիւնն ին-
դուստրիէլ ու երկրագործական լինելուց բա-
ցի, պիտի լինի նաև ազգային, ձիշտ այնպէս,
ինչպէս գասակարգային հաւասարութեան ըս-
կըզբունքը մէկն է ընկերվարութեան հիմնա-
կան պատգամներից։ այդպէս նաև ազգերի
հաւասարութեան սկզբունքը նրա անջատ ու
անբաժան մասերից մէկը պիտի լինի։

Ընկերվարութիւնը, եթէ չի ծառանում
տիրող մասնատիրական կարգերի դէմ, եթէ
նա չի ձգտում դասակարգօրէն շերտաւորուած



հասարակութիւնը մէկ ապագատասակարգային ամբողջութեան վերածել, եթէ նա իր տը- րամադրութեան տակ գտնուած բոլոր զէնքեւ- րով չի պայքարում տնտեսական այն բազմա- պիսի կեղեքումների դէմ, որոնց ենթարկուած է մարդկութեան մի մասը միւս մասի կողմից. եթէ ընկերվարութիւնն իրեն նպատակ չի դը- նում տնտեսական հաւասարութեան ուրեզ- բունքն իր տռաւելագոյն սահմանների մէջ կի- րառելու և' արտադրութեան և' բաշխման շր- ջանում, — ապա համարձակ կարող ենք ասել, որ մենք գործ ունենք մի վարդապետութեան հետ, որ, շահագործելով ընկերվարութեան զրօշ, իր հակաընկերվարական նպատակներն է իրագործում:

Իսկ եթէ պարզուի մէկ օր, որ ընկերվարութիւնն ոչ միայն պայքար չի տանում, այլ և իրացնում ու հաշտւում է դասակարգային շերտաւորման հետ. եթէ լինի այնպէս, որ ընկերվարական ուսմունքը կարողանայ ան- խով ապրել տնտեսական կեղեքումների իշ- խով ձեւերի հետ. եթէ նա չծառանայ տնտե- սական այն այլանդակ անհաւասարութեան դէմ, որ սկսում է արտադրութեան աշխար- հում և վերջանում բաշխման աշխարհով, — ապա պայքար պիտի բանալ հէնց իրե՛ն՝ ըն- կերվարութեան դէմ. բոլոր ուժերով պատ- ռար կանգնելով նրա յաղթական երթի առ- ջեւ.

Ճիշտ նոյնը պիտի լինի նաև աղքային հարցի նկատմամբ:

Եթէ մարդկութեան երազած ապագայ հասարակակարգը նախապատրաստող աշխա- տաւորական մեծ վարդապետութիւնն իր տը- րամազրութեան տակ եղած բոլոր զէնքերով ու միջոցներով չի ծառանում ազգերի ճնշում- ների դէմ. եթէ նա իր անկերագնների նպա- տակներից մէկը չի յայտարարում ազգային աղքատութեան և հաւասարութեան սկզբունքը. եթէ նա չի ձուլւում ու նոյնանում ազգերի անբռնագատ գոյութեան ու նրանց աղքատու- թեան գաղափարների հետ, — ապա նաև այս դէպքում առանց վարանումի կարող ենք յայ- տարարել, որ մենք գործ ունենք մի վարդա- պետութեան հետ, որ, շահագործելով ընկեր- վարութեան նուիրական զրօշը. իր հակաըն- կերվարական նպատակներն է հետապնդում:

Իսկ եթէ պարզուի մէկ օր, որ ընկեր- վարութիւնն ոչ միայն անհաշտ, բուռն ու տեսական պայքար չի տանում լանուն ազգա- յին հաւասարութեան սկզբունքի, այլ և ա- շակցում է բացայայտ կամ քօղարկուած ձե- ւերով, խօսքով կամ գործով — ազգերի սողբ- կութեան և ոչնչացման, — ապա առանց վայր- կեան իսկ տատանուելու կոռու սրբազն ճակատ պիտի բանալ ընկերվարութեան դէմ և ձգտել նրա վերջնական, լիակ ատար ու վճ- ռական խորտակման:

Որովհեաւ ի՞նչ է վերջ և վերջոյ ի՞նքը
ընկերվարութիւնը :

Ո՞րն է այն հիմնական առազգը, որ կա-
խարդական այնպիսի թովչութիւն է տալիս
այդ վարդապետութեան և անհամար բազ-
մութիւնները լծում տեալկան պայքարի :

Կարևո՞րը, էականն ու յատկանշակա՞նը,
ոգի՞ն այս ուսմունքի, հիմնակա՞ն սկզբունքը
նրա ո՞ւր պիտի որոնել արդիօք :

Անկասկած ոչ այն բառակոյտերի և ան-
թիւ ու անհամար բանաձենքի մէջ, որ ըն-
կերվարութիւնն այնքան առատօրէն հրապա-
րակ զրեց :

Կեանքը բազմիցս եկաւ ցոյց տալու, որ
նա մէկ կամակատար ստրուկ չէ տեսութեան
քմահան կառուցուածքները դիւրութեամբ
մարսելու համար :

Գաղափարների իրականացման ճանապար-
հին խորսակուել և ընկել են տեսական բազ-
մաթիւ ու անթերի շենքեր, որ այնքան դիւ-
րութեամբ կերտուել են մտքի աշխարհում :

Եւ այս իմաստով միթէ անխոցելի և ան-
պարտելի մեաց հէնց ինքն ընկերվարութիւնը :

Զմաց, արարախտաբարար :

Անթիւ էջեր կարելի է լեցնել այն ծանր
ու դաժան յուսախարութիւններով, այն մնի
ու հոյակապ փլուզումներով, պարտութիւն-
ների ու մոլորութեանց այն ընդարձակ շղթա-
յով, որ գէպքից-գէպք, առիթից-առիթ ու

գօրծից-գործ հիւսուել է ընկերվարութեան
տեսական աշխարհում և քակուել գործնական
կեանքի մէջ :

Եւ ոչ միայն այն հին օրերին, երբ ըն-
կերվարական միտքը ուտոպիական խանձա-
րուրի մէջ էր տակաւին, և ոչ միայն երէկ
ու տասնամեակներ առաջ, երբ նա զարդար-
ուած էր զիտականութեան շզարշով, այլ եւ
այսօք, երբ իր պարտուած ու անարգուած
վիճակում փորձ է անում, կորցնելով ամէն
ինչ, գէթ եր անունը փրկելու :

Այո՛, ծանր են յատկապէս ընկերվարա-
կան տեսական մտքի ու գործնական կեանքի
բաղինումներն ու այդ բազմիումներից ծնունդ
առած լուսախարութիւնները, Մի տարօրինակ
լաւատեսութիւն ժառանգուեց մասնաւորա-
րար Մարքսից ու Էնգէլսից, եւ ժառանգեց
յատկապէս մարքսիստական զպրոցը, Ենթա-
դրեցին, թէ կապիտալիզմի պարտութեան եւ
ընկերվարութեան յաղթանակի բոլոր գաղտ-
նիքները պարզուած են արդէն և ՏԻՀ-ը գ-
դարի վախճանը պիտի պսակուի նոր հասա-
րակակարգի հաստատումով :

Եղան խելօքներ մինչեւ իսկ, որոնք ա-
մենայն մանրամասնութեամբ նկարագրեցին
ապագայ կենցազաձելի բոլոր կողմերը՝ ըն-
տանիքից մինչեւ դպրոց և հասարակա-
կան վարչատնից մինչեւ արդիւնաբերական ձեռ-
նարկ :

Աւելին :

Մարգսիստական օբեկտիւիզմից բղխող զուարթ ու անփոյթ լաւատեսութիւնն այնպէս թունաւորեց հաւատացեալների մտածողութիւնը, որ շատերի համար աւելորդ նըկատուեց մինչև իսկ ապագայ հասարակակարգի ընդհանուր կառուցուածքի էական կողմերի բնոյթն ու նկարագիրը կանխատեսելու պարտականութիւնը :

Երբ ընկերային յեղափոխութեան յաղթանակը գայ, ինքնին արգէն, զիւրութեամբ և անմիջապէս, յարդարուն ու կատարուն ձեւերով պիտի գայ և իրականանայ նաև ընկերվարութիւնը. — ուրեմն էլ ինչո՞ւ հէնց այսօրուանից աւելորդ մտահօգութեանց նուիրուել և անտեղի եռանդ սպառել. — ահա այսպէս էին մտածում մարգսիստական օբեկտիւիզմով տարրուած լաւատեսներից շատերը : Երանք մինչև իսկ աւելորդ էին գտնում ընկերվար հասարակակարգի կոնկրետ ձեերի ու կոնկրետ արտայայտութիւնների մասին խօսելը :

Ու ահա մի օր եկաւ յեղափոխութիւնը, եկան յեղափոխութիւններն ու ջուր ցանեցին այս վառ ցնորժների վրայ:

Կեանքը յաճախ հիմն ի վեր շրջեց շատ բան այն կառուցուածքից, որ ընկերային մեծ տեսարանները այնքան մեծ լաւատեսութեամբ շտկել, յզկել ու կերտել էին տեսութեան աշխարհում :

Իսկապէս, ի՞նչ է իրենից ներկայացնում ընկերվար մեծ վարդապետութիւնը, ինչ մէջ է նրա էութիւնը, պատմական կոչումը, ուժն ու արժեքը, ո՞ւր է թագնուած այդ վառ ու կենցանի ուսմունքի հմայքն ու աղղեցութիւնը : Սրդեօք գործնական կեանքի մէջ նրա տեսական կառուցուածքի կրած ճարագառութեանը չե՞ն գալիս առելու, որ յանցանքը տեսութեանն է և ոչ կեանքինը, որ մեղաւորն ինքը ընկերվարութիւնն է, այդ անհող ու ցնորդածին ուսմունքը, և ոչ թէ ընկերվարականը՝ այդ ուսմունքը կեանքի մէջ ապիկարօքէն և անձեռնհաս ձեռվ գործադրողը : Ընկերվարութեան բառին ու տառին փարել, — այդ կը նշանակէ անխուսափելիօքն դրական պատասխաններ տալ մեր այս հարցումներին :

Բարեբախտաբար, սակայն, ընկերվաթեան էութիւնը այդ բառերի ու խօսքերի մէջ չէ :

Միանգամ ընդմիշտ պիտի ընդունել և հարազատել այն անխօցելի ճշմարտութիւնը թէ ընկերվարութեան ուժը, հմայքն ու էութիւնը այն հիմնական սկզբունքի մէջ է, որ լուսարձակի ձեռվ դէպի իրեն է քաշում աշխատաւոր բազմութեանց որոնազ հայեացքները և լուսաւորում նրանց տեսողութեան հեռաւոր հորիզոնները :

Զգակ մեկ ալնպիխ հասարակակարգի, ուր ախրում է իսկական ազատուրին, ուր չկայ որեւէ

ձեւի կեղերում, ուր նշմարիտ նաևասարութեան սկզբունքն է բագասորում, ուր ներդաշնակուած են անհատի եւ նաևարականութեան, մեկի եւ ամենքի, մեկ ազգի եւ նաևայն մարդկութեան ձգուումներն ու շահերը, — այդ կը նշանակէ դրանքնել լաւագոյն ընկերվարութիւնն ու լինել լաւագոյն ընկերվարականը :

Եթէ այս ընդհանուր պահանջներին բաւարում է ընկերվարութիւնը՝ պիտի լինել ընկերվարական. իսկ եթէ չի բաւարարում, ապա առանց վարանումի ու տատանման յամառ, անողոք ու անհաշտ կոխւ պիտի տառել ընկերվարութեան դէմ :

Եթէ որեէ քաղաքական հոսանք, յանուն որեէ սկզբունքի, ջատագով է հանդիսանուում բռնութեան, անհաւասարութեան ու կեղեքման որեէ ձեւի, — ապա հաստատ համոզուած պիտի լինել, որ գուք գործ ունէք մէկ մթին ու յետաղէմ ուժի հետ :

Անարժէք են խօսքերն ու բառերը — յանախ, զրեթէ միշտ, աւելի միշտ՝ միշտ և ամէն անգամ հրապութիչ, զեղեցիկ ու կաշառող. կարեորը մէկ որեէ շարժման գործնական արտայայտութիւններն են և նրանց ներքին իմաստն ու էութիւնը :

Ահա այսպէս ըմբոննեց Դաշնակցութիւնն իր դաւանած ընկերվարութիւնը (այսպէս չձեւակերպեց սակայն) և միշտ այդ պատճառով նա եղաւ այնքան կենսունակ, այնքան կուռ

ու հզօր :

Եւ իսկապէս, միթէ՞ անարժէք է այն ուշագրաւ երեսյթը, թէ ինչպէս Դաշնակցութիւնը սրանից գեռ տասնամետակներ առաջ այնքան անվարան ձեռվ և այնքան ծշմարտօքէն ըմբռնեց ազգային դատերի օրինաւորութիւնն ու արդարութիւնը (գործնական կեանքի մէջ), որոնց դէմ ծառացած էր ժամանակի հզօր հոսանքը, Մարքս-էնդէլսեան գաղափարական դրօշի տակ :

Երեք տասնամետ առաջ կարելի՞ էր գուշակ լինել ու նախասել. թէ մեր օրերին բովանդակ ընկերվար ընտանիքի մէջ չպիտի լինի և՛ ոչ մէկ հոսանք, որ յանդգնութիւնը ունենայ այլիս բացնակատ ազգերի գոյութեան ու նրանց դատերի օրինաւորութեան դէմ խօսելու :

Այսքան կարճ ժամանակաշրջանում և այսքան վճռական ու լիակատար յաղթանակ արդեօք կարելի՞ էր սպասել :

Եւ ապա, եկեղեցական կալուածների զըրաւման ժամանակ, երբ հայ քաղաքական մտքի ծայրայեղ թեկերը խորիմացօրին մէկ կողմէին քաշւում, որպէսզի իրենց «յեղափոխական» գրոշը չարատաւորեն յանուն «եկեղեցու» իրաւունքների տարուած պայքարի մէջ, ինչպէս եղաւ, որ վերստին Դաշնակցութիւնն իր ամբողջ կազմակերպական կառուցուածքով յենակ ու զօրավիդ եղաւ այդ պայքարին :

Այդ օրերին արդեօք կարելի՞ էր սպասել ,
որ հայ քաղաքական միտքն ընդամենը մի
քանի տարիների ընթացքում պիտի զգաստա-
նայ և սժափուի , մէկդի նետի անբովանդակ
խօսքերի կախարդանքը և յանուն եկեղեցա-
կան կալուածների տարած պայքարը նուիրա-
կանացնի , իբրև գերազանցօքէն յառաջադէմ
ու յեղափոխական պայքար :

Կարելի՞ էր սպասել , որ յետագային , հայ-
թքական կոփւների ընթացքում Դաշնակցու-
թեան կատարած հայակապ գերը , խօսքերի
տակ գոսացած հայ քաղաքական մտքի ծայ-
րաւեղ թեր պիտի համարի իբրև մէկ անհրա-
ժեշտութիւն , որ բղխում էր յեղափոխական
կուսակցութեան պարտականութիւններից :
Ինչո՞ւ տեղատառութիւնն այսքան վճռա-
կան եղաւ :

Ինչո՞ւ Դաշնակցութիւնը կարողացաւ
գործնական օրէն այսքան լստակ ու ճիշտ ըմ-
բռնել իր կոչումն ու գերը , ընկերվարութեան
իմաստն ու թելադրանքները :

Պարզ է միանգամայն :

Դաշնակցութիւնը յաղթանակով ելաւ
տևսական ու գործնական բաղխումներից , ո-
րովնետեւ իր գործունէութեան ընթացքին ա-
պաւինել էր ընկերվարութեան ոգուն և ոչ
խօսքին , նրա ներքին իմաստին եւ ոչ թէ
տառին :

Նա գտել էր , որ պայքարն ամեն կարգի

բռնուրեան դէմ , անկախ միանգամայն այն
բանից , թէ այդ բռնուրինը որտեղի՞ց է գալիս
արդեօք եւ որի՞ դէմ է ուղղուած , — մտնում է
իր յեղափոխական-ընկերվարական պարտակա-
նուրինների մէջ :

Կայ բռնուրթիւն որեէ տղգութեան դէմ
իբրև այգափախն , — ուրեմն պիտի մէկտեղեւ
ուժերը և բովանդակ հասակով ծառանալ այդ
բռնուրթեան դէմ :

Հալածուածած է որեէ համայնք սոսկ այն
պատճառով , որ իր խղճի հարցը նա տը-
որինում է այս և ոչ մէկ այլ աղօթատան
մէջ , — ուրեմն պիտի վիրջ տալ ամէն անտար-
բերութեան և հարուածներն ուղղել այդ հա-
լածանքի դէմ :

Դա՞ւ է նիւթուած որեէ հաւաքականու-
թեան ֆիզիքական գոյութեան դէմ , — ուրեմն
առանց վարանումի պէտք է շտկել ձականը և
ընկերվարութեան յեղափոխական դրօշի տակ
արշաւանք բանալ այդ գաւադրութեան դէմ :

Փականք կայ զրուած բերանների վրայ .
արդելուած է ազա՛տ խօսքը , ազա՛տ հաւա-
քոյթը . գրկուած է բազմութիւնն իր ան-
կապտելի սեփականութիւնն եղող այդ իրա-
ւունքներից յանուն որեէ սկզբունքի , — ու-
րեմն վերջնականորէն համոզուած պիտի լի-
նել , պիտի հաւատալ առանց ամենափոքր վա-
սանումի , երբեք կասկած չպիտի ունենալ , որ
ընկերվարութեան իմաստին , նրա ոգուն , նը-

բա բովանդակ էութեան հակասող բոնութիւնն է տեղի ունենում:

Ուրեմն, եթէ ճշմարիտ յեղափոխականներ ու ընկերվարականներ էք դուք . ապա պիտի հաւաքէք ձեր ուժերը, խացնէք ուժտեալների չարքերը, պարզէք պայքարի դրօշը եւ մահացու հարուածը տաք հմայիչ խօսքերի տակ քողարկուած ալիք վատագոյն ուժին :

Որովհետև, մի անդամ էլ կրկնենք, ընկերվարութիւնը դէմ է մարդկային անկապատելի սեփականութիւնը եղող քաղաքացիական ազատութիւնների դէմ նիւթած հալածանքին, նա թշնամի է կեղեքման բոլոր ձեւերին, նա իր հիմքի մէջ ժխտում է անհաւասարութեան որևէ սկզբունք, նա ձգտում է մէկ այնպիսի հասարակակարգի՝ ուր ներդաշնակորէն զուգորդուած են ինքնարժէք և հաւասարժէք անհատի և հաւաքականութեանց, մէկի և ամենքի, մէկ ազգի և համայն մարդկութեան փոխադարձ շահերն ու ձգտումները:

Ահա այսպէս ըմբռնեց Դաշնակցութիւնն իր որդեգրած դաւանանքի իմաստը, այսպէս գործեց մէկ երրորդ դար շարունակ և այդ պատճառով, չնայած իր կրած անվերջ հալածանքներին և ապրած անսպառ աղէտներին, մնաց, այնուամենայնիւ, իբրև ամէնէն զօրաւոր ազդակը մեր կեանքի, պահեց իր գաղափարական բերդն առանց ձեղքուածքի և ա-

զէտներից նօսրացած իր շարքերը շարունակ խտացրեց նոր ու թարմ հետեւողների հոյակապ շարանով,

Այսպէս ուրեմն,

Ընկերվարութիւնը պէտի գայ ու պիտի տօնի իր յաղթանակը ազատ ազգերի ազատ երկնակամարի տակ. նա չի կարող իրեն հետ հայածանք բերել, նա մեր ըմբռնած վեհ ու գեղեցիկ դաւանանք չի լինի, եթէ իր յաղթանակը գայ տօնելու ազգային հալածանքների գնով ու ազգութեանց գերեզմանի վրայ :

Սակայն մենք ընդունուած սովորութեան տուրք տալով, փոխն ի փոխ գործածում ենք շարունակ «Հայրենիք» և «ազգութիւն», «ազգային ազատութիւն» և «անկախութիւն» բառերը :

Զատենք այս գաղափարները և յստակօքն պարզենք մեր զիրքը դէպի հայրենիքի եւ որա անկախութեան հարցերը, որոնց նուիրուած են մեր այս մի քանի տողերը :

Հայրենիքն ու ազգութիւնը, ազատութիւնն ու անկախութիւնը անշուշտ չափազանց սերտ ու նուրբ թելերով կապուած են իրար, սակայն նրանք, այնուամենայնիւ, տարբեր են թէ՛ իբրև գաղափարներ ու թէ իբրև արժէ քներ :

Անկախութիւնը ազատութեան մէկ արտապահպան է միայն. իսկ հայրենիքն այս միջավայրութեանը ազգութիւնն ապրել ԱՅՆԻ ՆԵՐՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI LIBRARY

է զարերով , ուր նա իր պատմութիւնն է հիւսուել և ուր կուտակել է իր ինքնութիւնը յատշկանչող հոգեկան ամբողջ հարսառութիւնը :

Ընդունել ազգութիւնն ու դէմ զուրսգալ նրա հայրենիքին , այդ կը նշանակէ ջընջել աջով այն , ինչ զրուած է ձախով :

Տրամարանական անհեթեթութիւն է որևէ հալածանք որևէ ազգութեան թէ ակավայրի դէմ , երբ այդ ազգութեան դէմ զործազըռուած որևէ բռնութիւն նկատուած է իրքեացարձակ ժխտումն ընկերվարութեան ամենէն հիմնական սկզբունքների :

Սովետութիւնը միա՞յն նման դէպքում կարող է օգնութեան գալ , եթէ նա , ի հարկէ , իրքեացիութեան գէնք նկատուի :

Հայրենիքն այն միջավայրն է , ուր ազգութիւնը լաւագոյն ձևով կարող է յայտնաբերել իր ստեղծագործական ու շինիչ տաղանքը , ուր նա բոլորանուել ձևով կարող է փարել իր պատմական վեհ առաքելութեան , ուր նա հանգիստ սրտով լարող է չունչ քաշել և իր թեհը տարածել :

Ազգութեան պոհպանման , զարգացման ու ստեղծագործութեան նախապայմանն է հայրենիքը ու մանաւանդ՝ նրա անկախութիւնը :

Յազաքական անկախութիւնից զուրս դրուած բոլոր ու զիները շեղումն են ազգութեանց պահպանման նուիրական սկզբունքից . նրանք

դէմ են ընկերվարութեան հիմնական պատգամներին , նրանց ոգուն ու էութեան . այդ պարուուղի , անշխատակ և մթին ճամբաները չեն լուսաւորուած այն գաղափարներով . որ դաւանում է աշխատաւոր մարդկութիւնը :

Ազգերը պէ՛տք լինեն ազատ և անկախ , — ահա այն մեծ նշանաբանը , որ ցաւով ու երկունքով , անեղ պայքարների ու աննախրնթաց բաղխումների գնով մեր զորն իր ուսերին առած յաղթականորէն բերում է պատմութեան խորքերից :


Ազգերը պէ՛տք լինեն ազատ և անկախ , — որովհետեւ ա՛յդ է ազգութեանց պահպանման ու զարգացման միակ նշմարիտ ուղին , ա՛յդ է նշմարիտ ընկերվարութեան յատակ , պարզ , մեկին ու խրոխտ պատգամը :

Աւելին :

Մէկ հիմնական սիսակ . որ յատկապէս անկախութեան հարցում թույլ է տուել իրեն ընկերվար միտքք ու նաև , ցաւով պիտի ասել , Հ. Յ. Դաշնակցութիւնը , որ առաջ պէտք է սրբագրուի :

Ինչպէս ծանօթ է , ընկերվարական կուսակցութիւնների ծրագրերը սովորաբար բաղկացած են երկու մասից . բռն ծրագրից կամ , ինչպէս ընդունուած է ասել , նուազագոյն բաժնից և ապա՝ առաւելագոյն ծրագրից :

Առաջինի մէջ գծուած են այն ուղիները , որոնք ծառայում են իրքեացուկ սոսկ միջոց վերջ-



նական նպատակին հասնելու համար, — հետեւաբար այդ միջոցները փոփոխական են ու ժամանակաւոր :

Իսկ երկրորդ բաժնի մէջ ամփոփուած է վերջնական նպատակը, բոլոր ձիգերի ու ձբգտումների վերջնական կայանը, որ, հետեւաբար, անփոփոխ է ու յաւիտենական :

Իրապէս յաւիտենական է արդեօք ընկերվարական մեծ ուսմունքը, անփոփոխ է արդեօք այն, ինչ այնքան մոլոզնօրէն դաւանում է աշխատաւոր մարդկութիւնը :

Երբեք և ոչի՞նչ չպիտի՝ փոխուի արդեօք այն վարդապետութիւնից, որ այսօր իր շուրջն ունի համախմբած հաւատացեալների հսկայ բազմութիւններ :

Չգիտենք :

Այսօր, մե՛զ համար, մարդկային մեր ակա՛ր մտքի առջև չեն գծուում աւելի վառ, աւելի ընդարձակ հորիզոններ : Այն կէտը, ուր վերջանում է մեր հոգու հայեացքը և երկինքը միանում երկրին, — այդ վերջին ու պայծառ կէտը ընկերվար հասարակակարգն է, մեր ձբգտումների ու երազանքների վերջին կայանը, եթէ աստուածային մէկ հզօր ներշնչումով կարողանայինք կարդալ հեռաւոր դարերի գաղտնիքը, եթէ մէկ հրաշածին պայծառատեսութեամբ գիտնայինք թէ՝ ի՞նչ կենցաղաձեեր ու հասարակակարգեր, արդեօք ի՞նչ ուսմունքներ ու վարդապետութիւններ — աւել-

զի՛ վաեմ, աւելի՛ արդար, աւելի՛ վեհ ու աւելի՛ գեղեցիկ — պիտի գան ընկերվարութիւնը փոխարինելու, — ապա մենք հենց այսօրուանից բոլորանուէր ձեռվ կը փարէինք այդ նոր կերան քարոզին և մեր քայլերն ու գործերը, մեր պահանջներն ու ձգտումները, մեր կեանքի ընթացքը կը գծէինք այդ նոր վարդապետութեան հունով :

Ասացինք սակայն, որ նախագծուած են մեր հոգու եւ մտքի տեսողութեան սահմանները :

Ընկերվար հասարակակարգը վերջնական պահումն է մեր բոլոր ձգտումների և հանգրուանը մեր նպատակների, որովհետև նա՛ է մեր սահմանափակ տեսողութեան վերջին կայանը, Այս ասել է, ուրեմն, որ ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ, այնտեղ, ուր ընկերվարութիւնն է տեղաւորուած, այդպեղ տեղաւորուած պիտի լինեն նաև այն հիմնական գաղափարները, որոնք կազմում են այդ ուսմունքի սգին, էութիւնը . որոնք իմաստ են տալիս նրա գոյութեան, առանց որոնց ընկերվարութիւնը կը լինէր ամէն ինչ, սակայն չեր լինի այն, ինչ մենք ըմբռնում են ասոկանում ենք ընկերվարութիւն ասելով :

Ուրեմն ընկերվարութիւնն իր ջինջ ու բիւրեղ նկարագիրը, իր վեհ էութիւնը, իր ամբողջական գէմքը պահելու համար պիտի տեղաւորուի ծրագրի առաւելագոյն բաժնի

մէջ իր բոլոր հիմնական ու բազկացուցիչ մասներով։ Նրա տարբերից և ոչ մէկը, և ո՛չ մէկ պատճառ արանութեամբ չի կարող անջատուել իր հիմնական բունից և այս կամ այն ձեւի տակ տեղափոխուել մէկ ուրիշ տեղ։

Ծրագրի նուազագոյն բաժնի մէջ պիտի մնայ այն ամէնը, ինչ ծառայում է իրրե սոսկ միջոց վերջ ական նպատակին հասնելու համար, այսինքն այն ամէնը, ինչ, հետեւաբար, կրում է ժամանակաւոր բնոյթ և իր էութեան մէջ ենթակայ է փոփօխութեան։ իսկ առաւելագոյն բաժնի մէջ պիտի տեղաւորուի ամբողջութեամբ ինքն ընկերվարութիւնը իր բոլոր հիմնական մասներով, այսինքն այն, որ նպատակ է և ոչ թէ միջոց և որ, հետեւաբար, ենթակայ չէ իր էութեան մէջ որևէ փոփօխութեան և դատապարտուած չէ միայն ժամանակաւոր կեանք ունենալու։

Տարաբախտաբար այս հիմնական սկզբունքները տեղ չեն դասձ ընկերվարական կուսակցութիւններից և ոչ մէկի դաւանագրի մէջ։ Արանք բացակալում են մինչև իսկ Դաշնակցութեան հաւատագրից, մի հաւատագրիր, որ, ինչպէս տեսանք, բնազդական առողջ մըզումով հայ մեծ քաղաքական կազմակերպութիւնը դրել էր գործունէութեան միանգամայն ռւեդի և ճշմարիտ գծի վրայ։

«... Զգուելով նանդերն կազմակերպել մեկ, ներդաշնակ, ամբողջուկան մարդկութիւն

այսօրուան կտոր-կտոր, բաժան-բաժան ու նակամարտ աշխարհին տեղ, ընկերվարութեան իրազործումը չի պահանջում արդի ուրոյն ազգային միութիւնների խսպան ձուլումը։ միութիւններ, որոնք իրենց պատճականորեն ժառանգած բեղմնաւոր մասնայատկութիւններով կարող են միայն նոխացնել ապագայ ընկերվար մարդկութիւնը»։

Ահա, օրինակ, այն կտորը, որ ազգութեան մասին տեղ է գտած Դաշնակցութեան ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ։

Աշխեռուզով կարգացէք մեր բերած կտորը, խորամուխ եղէք նրա ներքին իմաստի մէջ, ասացէք այն, ինչ խոհեմօրէն թերի է թուղնուած, —և դուք կը տեսնէք այդ կտորի վրայ մարքսիստական զպրոցի հակազգային ոգու հետքերն ու այն վախը, որ այդ զպրոցը ներշնչել է իր հակառակորդներին։

«Չգտելով հանդերձ... ընկերվարութեան իրազործումը չի պահանջում արդի ուրոյն ազգային միութիւնների խսպան ձուլումը...»։

Ալլեւ չարունակենք, որովհետեւ այս մէկ կտորի մէջ արդէն իսկ շատ բան կայ առուած։

Մեր ընդգծած տողերի տակ թագնուած է այն վախը, որ մարքսիստական զպրոցը ներշնչել էր իր շրջապատին յատկապէս ազգային հարցում և այն չափէն աւելի պատկառանքի զգացումը, որ կար զէպի ոընկերվարութիւն» խօսքը։

Այսպէս ուրեմն։

Հ. Յ. Դաշնակցութիւնը պաշտպան է հանդիսանում ազգային ուրոյն գոյութեան, որովհետև ընկերվարութիւնը չի պահանջում (ի՞նչ սարսափելի բան) նրանց խապառ ձուլումը։

Այս նշանակում է, որ ընկերվարութիւնն իսպառ չպահանջելով հանդերձ, մի չափով, այնուամենայնիւ, պահանջում է ազգութեանց ձուլումը, և ապա, որ ամէնէն գլխաւորն է՝ ծրագրի բանաձեռումից այն տպաւորութիւնն է ստացւում, որ Դաշնակցութիւնը գէմ չէ ազգութեանց ուրոյն գոյութեան սոսկ այն պատճառով, որ ընկերվարութիւնն այդ պահանջը չի առաջարրում, այս ասել է միաժամանակ, որ եթէ մէկ մէկ օր ընկերվարութիւնըն այդպիսի մի պահանջ առաջացրէր, ապա Դաշնակցութիւնն այդ պահանջի առջնու տեղի պիտի տար (կամ կարող է տեղի տալ)։

Պարզ չէ միթէ այն թիւր ըմբռնումը, որ այս հարցերի ձևակերպման մէջ հանդէս է բերում — անշուշտ տեսականօրէն — նաև Դաշնակցութիւնը։

Համոզուած կարելի է լինել, որ շատ մօտ չըջանին այս կարգի բռլոր թիւրիմացութիւնները միանգամ ընդմիշտ պիտի վերանան ոչ միայն Դաշնակցութեան, այլ և բոլոր այն հոսանքների ծրագրերից, որոնք որդեգրած են ընկերվարական վարդապետութիւնը։

Ազգերի և ընկերվար հոսանքների վերջին տասնամեւակների կեանքն ու պայքարը եկան

մեծապէս զիւրացնելու մի շարք կնճիռների լուծումը և լոյս սփռելու այն կէտերի վրայ, որոնք մինչ այդ մութ էին մնացած։

Պարզուեց նաև, որ ընկերվարութիւնն աշխատաւոր մարդկութեան կրազած ուսմունքը չէր լինի, եթէ նա գար ուրոյն ազգերի ձուլումը պահանջելու՝ այս կամ այն ձեւի տակ։

Ընկերվարութիւնը չի կարող չձգտել, նա ձգտում է ու պիտի ձգտի կազմակերպել մէկ ու ներդաշնակ մարդկութիւն այսօրուան կտոր կտոր, բաժան, բաժան ու հակամարտ աշխարհի տեղ ու այդ նպատակին նա կարող հասնել նաև այն ժամանակ, եթք բոլորանուէր ձեռվ փարի ազգերի պայքարին, անվերապահօրէն զօրավիդ հանդիսանայ նրանց գոյութեան, պահի ու պահպանի մարդկային հաւաքականութիւնը յատկանշող ազգային այն միութիւնները, որոնք — ասենք իր իսկ ծրագրի խօսքերով — իրենց պատճականօրէն ժառանգած բեղմնաւոր մասնալատկութիւններով կարող են միայն ճոխացնել ապագայ ընկերվար մարդկութիւնը։

Սակայն հիմնական թերացումն ալսուել չէ բնաւ։

Կարելի է, վերջապէս, ընդունել, որ գրչի մէկ չարաձնի խաղով «խապառ» խօսքը տեղ է դատել այնտեղ, որտեղ նա խապառ տեղ չպիտի գտնէր։

Կարևորն ու էականը, բնորոշն ու յատկա-
նչականը մտածողութեան այն սկզբունքային
ընթացքն է, որ, ինչպէս քիչ վերը շեշտեցինք,
շօշափած հարցերի լուսաբանութեան մէջ համ-
դէս է բերում մեր ծրագիրը :

Ըսկերվարութեան հանդէպ ազգութիւննե-
րը, ըստ ծրագրի, գրուած են պարզապէս ըս-
տորագառ վիճակի մէջ։ Ըստ ծրագրի, թելա-
դրո՛ղը, հրահանգողն ու պարտադրո՛ղը ընկեր-
վարութիւնն է, իսկ ենթական ու կամակա-
տարը՝ ազգութիւնը։

Ազգութիւնը, ըստ ծրագրի, ամօթխածօ-
րէն տեղ է դառն կուսակցական դաւանազրի-
տուաւելագոյն բաժնի մէջ, որովհետեւ դբան
դէմ չէ ընկերվարութիւնը։

Այսպիսով, փոխուել են դերերն ու տե-
ղերը և ընկերվարութիւնն իր ստորագաս վի-
ճակից դուրս գալով, գերիշխան դերք է գրա-
ւել ազգութեանց հանդէպ։

Պարզ հասարակակարգը—մինչև իսկ ըն-
կերվար—որ կեանքի է կոչուում պահելու եւ
պահպանելու համար յարատեւ արժէքները (ու
նաև ազգային), մտածողութեան մէկ տարօրի-
նակ, անըմբոնելի ու սիրալ ընթացքով յա-
փունականութեան բնոյթ է ստացել և դար-
ձել ինքնանպատակ։

Սակայն չէ որ հասարակակարգերը շա-
րունակաբար փոփոխուել են պատմութեան
ընթացքին։

Չէ որ նրանցից այն, որ երէկ նպատակ
էր, յետագային, ապրող սերունդների համար,
գարձել է պարզ միջոց մի այլ, աւելի բարձր
հասարակակարգի համնելու համար, Ու չէ որ
ազգերը ոչ միայն չեն չքացել (իսուք չի կա-
րող լինել, ի հարկէ, փիզիքական բնաջնջու-
մի մասին), այլ և դարերի ընթացքում կու-
տակն են պատքարի ու գոյութեան աւելի զօ-
րաւոր զէնքեր, փարթամանալով իրենց թէ՛
նկրքին բովանդակութեամբ ու թէ՛ արտաքին
ձևերով։

Եւ միթէ պարզ չե՞ն այդ հարցերի պա-
տասխանները։

Ազգերը մնացել են ու պիտի մնան իբրև
մարդկային հաւաքականութիւնը յատկանշող
յառաջադէմ ազգակներից մէկը, իսկ հասա-
րակակարգերը եղել են ու պիտի լինին այդ
հաւաքականութիւնը լաւագոյն ձևով սպա-
սաւորող միջոցներից մէկը, այսօր՝ այս, իսկ
վաղը՝ մէկ ալլ հասարակակարգի միջոցով՝ ա-
ւելի՛ արդար, աւելի՛ փարթամ, քան իր նա-
խորդն էր։

Աւելին չէ ու չի կարող լինել նաև ըն-
կերվարութիւնը։

Այսօր նա մեր երազանքների վերջին կա-
յանն է, որովհետեւ աւելի հեռուն անկարող
ենք տեսնել, սակայն վաղը, գարեր ու տաս-
նեակ գարեր վերջ, նա պիտի դառնայ պատ-
մութեան անցած նանապարհի մէկ սովորա-

կան փուլը , նոր ու աւելի բարձր աստիճանների հասնելու համար :

Որովհետեւ , փիլիսոփայական լայն ու ընդգարձակ առումով , իդէալը անհստանելի պիտի մնայ միշտ մարդկութեան համար , որին նա միշտ պիտի ձգտի : Որովհետեւ հարազատ թարգմանը մարդկային ներքին էութեան եղել է ու պիտի մնայ լեսինգեան այն մարդը , որ նախընտրում է միշտ ձգտել ճշմարտութեան , սակայն նրան երբեք չհասնել :

Որովհետեւ մէկ օր , վերջապէս , այս նոյն ճակատագիրը պիտի ունենայ նաև ընկերվար հասարակակարզը : Նա պիտի դադարի մադկային որոնող մտքի երանական աղքիւրը լինելուց , նա պիտի ընկնի ու խորտակուի գալիք զարերի անիմանալի ձգտումների առջե ու ճանապարհ գծի դէպի այն հորիզոնները , որ յետագային ու յետագայ ժամանակները պիտի բանան մարդկութեան համար :

Տուեալնե՛ր , հիմունք և իրաւունք չունենք սակայն այս նոյն խօսքերը նաև ազգութեանց մասին ասելու :

Եթէ ազգերը հրով ու սրով չպիտի բնաշնչուեն , ապա նրանք յարանունօրէն զարդանալով ու փարթամանալով , պիտի մշտապէս ապրեն , իբրև մարդկային հաւաքականութիւնը յատկանշող մէկ անիմանալի , խորհրդաւոր և գաղտնալի ձեւ :

Որովհետեւ միշտ և սմէն անգամ ճապո-

նական հրավառ գետինը , բրիտանական մառախլապատ երկինքը , սքանդինաւեան խոժութու ու ցրտաշունչ բնութիւնը , եգիպտական անծայրածիր անապատները , իտալացու ջինջու կապուտակ երկնակամարն ու հայկական կարկաչանոս ջրերը , ձիւնափառ սարերն ու անդնդախոր ձորերը ա'յլ հնչիւն , տարբե՛ր հոգի , մէկ ուրիշ՝ նկարագիր ու բնութիւն պիտի կերտեն իրենց բնակիչների համար :

Մարդկային հանձարը , նաև հազարաւոր տարիներ յետույ , պիտի արտայարութի ու ըստակածագործի ազգութեանց միջոցով , ու նաև հազարաւոր տարիներ վերջ բրիտանական ազգային հանձարը պիտի խօսի մէկ նոր ու ինքնակերտ Շէքսպիրի գրչով , որ տարբեր պիտի լինի իտալական ապագայ Դանտէի գրչից :

Արդ , քանի որ այսքան տարբեր են ընկերվար հասարակակարգի և ազգութեանց արժէքները թէ՛ պատմական , թէ՛ հասարակագիտական ու թէ՛ զուտ մեթոդաբանական տեսակէտից , ապա առանց ամենափոքրիկ վարանումի իսկ մէկ կողմ պիտի նետել խօսքերի կախարդանքը և յատակօրէն պարզել այն տուրքը , որ ընկերվար ծրագրի մէջ պիտի տրւի Աստուծուն և Կեսարին :

Եթէ գերադաս ու ստորագաս վիճակների ինդիք կարող է լինել , ապա անկասկած է , որ գերադաս վիճակը պատկանում է ազգութեան , իսկ ստորագասը՝ ընկերվարութեան :

Ո՞չթէ ընկերվարութիւնն է, որ, ձգտելով
հանդերձ կազմակերպել մէկ, ներդաշնակ,
ամբողջական մարդկութիւն այսօրուան կտոր-
կտոր, բաժան-բաժան ու հակամարտ աշխար-
հի տեղ, չի պահանջում ազգային միու-
թիւնների իսպառ ձուլումը և այդ պատճա-
ռով միայն ազգութեանց պահպանումը դառ-
նում է մեր նպատակներից մէկը և ամօթ-
խածօրէն տեղ գրաւում ծրագրի առաւելա-
գոյն բաժնում, այլ ազգութիւնն է, որ, ձրգ-
տելով մարդկային համակենցաղի աւելի՛ փար-
թամ, աւելի՛ ճոխ, աւելի՛ վեհ ձևերի, որ-
դեզրում և գաւանում է ընկերվար ուսմուն-
քը, իբրև դէպի այդ նպատակը տանող մէկ
փարդապետութիւն։

Ու պարզ է ինքնին, որ պատմականօրէն
ժառանգած իրենց բեղմնաւոր մասնայատկու-
թիւններով ապագայ հասարակակարգը ճո-
խացնող ազգութիւնները, եթէ տեսնեն, որ
իրենց այս ձգտման դէմ է ընկերվարութիւնը,
ապա նրանք կը ծառանան նաև ընկերվարու-
թեան դէմ, առանց վայրկեան իսկ տատան-
ուելու։

Որովհետեւ թոյլատրողը, հրահանգողն ու
պահանջողը, — մէկ անգամ էլ կրկնենք, — ազ-
գութիւնն է, և ոչ թէ այս կամ այն դաւա-
նանքը, դաւանանքը՝ ա՛յդ թելագրանքների,
հրահանգների ու պահանջների մէկ խտացումն է
միայն և ոչ աւելին, դաւանանքն ազգութիւնից

ո՛չ դուրս է և ո՛չ վեր, այլ նա ազգութեան
մէջ է, նրանից է բզիսում, նրանով կեանք
առնում և նրա մէջ էլ վերջ գտնում։

Ահա այս սկզբունքն ամենայն լսաւ-
կութեամբ ու պայծառութեամբ, — որքան,
ընդհանրապէս, պայծառ ու յստակ կարող է
լինել մարդկային լեզուն, — տեղ պիտի գտնի
ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ։

Սակայն մենք շարունակ ազգութեան
շուրջն ենք պտտում, առանց անկախութեան
մասին խօսելու։

Սացինք, որ չի կարելի ազգութեան
պաշտպան հանգիսանալ և նրա հայրենիքի
դէմ պայծարել. ու չի կարելի հայրենիքի ան-
ձեռնմխելիութեան սկզբունքը որդեզրել, ա-
ւելացնենք անմիջապէս, առանց այդ հայրենի-
քի անկախութիւնը պահանջելու։

Աւելին։

Ազգայնօրէն անկախ ապրելու իրաւուն-
քը պիտի տարածուի ազգային ամբողջակա-
նութեան վրայ թէ՛ հայրենիքի մէջ և թէ՛
հայրենիքից դուրս։

Ազգութիւնն իր բոլոր ձիւզերով պիտի մը-
նայ ու պիտի պահուի իբրև անմասնատելի
մէկ ամբողջութիւն։

Ապագան դիւրութեամբ կը գծի անշուշտ
այն ձևերը, որոնք հնարաւոր կը դարձնեն
այս սկզբունքի լիակատար կիրառումը տը-
եալ ազգութեան նաև այն հատուածների նը-

կատմամբ, որոնք պատմական բազմապիսի պատճառների հետևանքով պոկուած են իրենց բունից և ապրում են հայրենիքից գուրս, տարբեր հորիզոնների տակ :

Սակայն այսօր իսկ պարզ է այն լուծումը, որ գծուած է հայրենիքի մէջ ապրող ազգութեանց համար :

Ինչպէս անվերաքննելի է ազատութեան սկզբունքը (խօսելու, գրելու, դաւանելու, հաւաքուելու, շարժուելու ելն . ելն .) անհամար՝ պետութեան մէջ, նոյնպէս անվերաքննելի է անկախութեան սկզբունքը (ազատորէն, անկախարար և ազգովին ապրելու, զարգանալու, ստեղծագործելու ելն .) ազգութեան համար՝ համամարդկային մեծ ընտանիքի մէջ :

Որովհետեւ ազգութիւնը ոչ միայն իրաւունքների օքեկա է (ազգութեան պատկանող անհատների համար), այլ և իրաւունքների սուբ'եկտ (մնացեալ ազգերի և համայն մարդկութեան հանդէպ) :

Ազգութիւնն իբրև մարդկային հաւաքականութիւնը յատկանշող մէկ ուրոյն ձև, հանդէս է գալիս ազգերի գոյութեան մրցադաշտում իբրև մէկ, անբաժան և լրիւ ամբողջութիւն, հրապարակ է իջնում իբրև փիզիքական անձ՝ իր անվերաքննելի պահանջով :

Անկախութիւնը—ազգերի անկապտելի իրաւունքն է, նրանց անվերաքննելի ու նը-

փրական սեփականութիւնը :

Անկախութիւնն ազգ-սուբ'եկտի ազատութեան միակ ձեն է, անկաշկանդ ապրելու եւ ստեղծագործելու միակ միջոցը :

Ու քանի որ անկախութեան սկզբունքը ազգութեան մէկ ալսքան կարևոր յատկանիչն է—երբեք փոփոխուող ու մշտապէս ապրող, քանի որ ազատութեան սկզբունքը մէկն է մարդկութեան յարատե նպատակներից . եզել է ու պիտի մնայ, ուստի նաև անկախութեան սկզբունքը, իբրև ազգ-սուբ'եկտի ազատութիւնը մարդնաւորող միակ ու անխաթար ձեւը, պիտի մնայ ազգութեան նպատակների աշխարհում :

Այս իմաստով ընկերվարութիւնը մեզ համար ընդունելի լինելու համար պիտի լինի ոչ միայն աշխատաւորական, ազգային և երկրագործական, այլ և, եթէ կարելի է այսպէս առել, անկախական .—գաշնակցային : Անկախական այն իմաստով, որ ամէն մէկ ազգութեան լիակատար քաղաքական ազատութիւնը պիտի նկատուի իբրև այդ ազգի (և ոչ ուրիշի) անբռնազատելի իրաւունքն ու անվերաքննելի սեփականութիւնը, որի տէրն ու դատաւորը ինքն է և ոչ ուրիշը, և դաշնակցային ճիշտ այն ըմբռնուով, որ ազգերը մէկ, ներդաշնակ և ամբողջական մարդկութիւն կազմելու համար հանդէս պիտի գտն իբրև հաւասարարմէք և իրաւահաւասար ազատ միութիւններ և իրենց ազատ կամքով ու դաշնակցային հիմերի վրայ անզատուուեն համամարդկային մեծ գերդաստանի մէջ :

Անկախութեան պահանջն այս իմաստով
ահա ընկերվարութեան մէկ անբաժան մասը
պիտի դառնայ եւ իբրև այզպիսին տեղաւոր-
ուի ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ :

Այս տեսակէտից անխոցելի չէ ընկերվար
կուսակցութիւններից և ոչ մէկի դաւանանքը .
պակասաւորէ նաև Դաշնակցութեան ծրագրը :

Մէկ տարօրինակ ըմբռնումով ազգու-
թիւնը , ինչպէս տեսանք , տեղ է գտել կու-
սակցութեան նպատակների աշխարհում (թէև
...ընկերվարութեան թոյլուութեամբ) , իսկ
հայրենիքի գաղափարն ու այդ հայրենիքի ա-
զատութեան պահանջը մնացել են այդ նոյն
դաւանագրի նուազագոյն բաժնի մէջ , ուր
տեղաւորուած են գէպի վերջնական նպատակ
տանող (ու փոփոխական և ժամանակաւոր
կեանք ունեցող) միջոցները :

Ազգութեան հետ մէկտեղ նաև անկա-
խութեան գաղափարը պիտի դառնայ աշխա-
տաւոր մարդկութեան մշտատե նպատակնե-
րից մէկը և տեղաւորուի նրա ամբողջական
դաւանագրի մէջ :

Ընկերվարութիւնը պիտի դառնայ նաև
անկախութեան դաւանանք :

Սխալ չհասկացուենք սակայն :
Մեր խօսքն անկախութեան սկզբունքի մասին
է . բայց ոչ այդ սկզբունքի կոնկրետ կիրա-
ռութեաների :

Հաւասարութեան գաղափարը մէկն է
ընկերվարութեան հիմնական տարրերից և
այդ պատճառով այդ գաղափարը տեղ է զը-
տել ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ , սառ-

կայն նրա իրագործման միջոցները տեղաւոր-
ուել են այդ նոյն ծրագրի նուազագոյն բաժ-
նում , որովհետեւ մարտնչող մարդկութիւնն
այսօր՝ այս , իսկ վաղը՝ բոլորովին այլ մի-
ջոցներով պիտի ձգուի այդ հաւասարութեան
իրականացման :

Ընկերվարութիւնը բացարձակապէս ժըմ-
տում է կեղեքման սկզբունքը . ուստի նա այդ
սկզբունքը յայտարարում է իբրև իր անվերա-
քննելի նպատակներից մէկը . Սակայն այսօր
նա ձգտում է կեղեքման այդ ձեւերը վերաց-
նել՝ ութ ժամեայ բանուորական օրուայ , աշ-
խատավարձի նուազագոյն սակէի , այլև այլ ա-
պահովագրական հիմնարկութիւնների և այլ
նման միջոցների օգնութեամբ . ուստի նա այդ
միջոցները — միշտ փափախական և միշտ ժա-
մանակաւոր — սպահում է ծրագրի նուազագոյն
բաժնի մէջ , ուր վաղը , նրանց փոխարէն , պայ-
քարի այլ միջոցներ (նոյն նպատակը հետա-
պնդող) պիտի զան տեղ զրաւելու .

Ազգութիւնը յարատե արժէք է և այդ
պատճառով նրա գաղափարը դարձած է ինքնա-
նպատակ և տեղափոխուած ծրագրի առաւե-
լագոյն բաժինը . իսկ ազգութեան պահպան-
ման միջոցները՝ մայրենի լեզուի կիրառում
(գլուցում , գատարանում և պետական այլ
հիմնարկութիւններում) , ազգային այս կամ
այն սովորոյթի պահպանում , պետական ըլլուգ-
ջէից մի որոշ գումարի յատկացում այս կամ
այն ազգութեան կուլտուրական նպատակնե-
րի համար ելն . ելն . — այս բոլորը , իբրեւ

ժամանակաւոր միջոցներ, տեղափոխուած են
ծրագրի նուազագոյն բաժինը։ Զերկարենք։

Ահա այսպէս պիտի լինի նաև անկախութեան հարցում։

Անկախութեան պահանջը, իբրև հիմնական սկզբունք, իբրև պայքարող ազգութեան վերջին կայան, իբրև մէկ անփոփոխ ու մշտատե նպատակ տեղ պիտի գտնի ընկերվար կուսակցութեան ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ, իսկ այդ անկախութեան իրականացման կոնկրետ ձևերը (այսօր՝ ինքնավար, վաղը՝ ֆեռարտիվ կամ մէկ այլ ձևով) եղել են ու պիտի մնան այդ նոյն ծրագրի նուազագոյն բաժնում։

Թէ որքան արդար ու անխոցելի են մեր դիտողութիւնները, — այդ ցուց է տալիս նաև այն աննախընթաց վերիվայրումը, որ տեղի ունեցաւ Ռուսաստանում, բոլցեւիկեան տիրապետութեան շրջանին։

Ընկերվար մտքի ամէնէն «Ճախ» թեր (անուանապէս անշուշտ) ոխերիմ՝ հակառակորդն էր ազգութիւնների ու նրանց անկախութեան ձգումի։

Այն երանելի օրերին, երբ բոլցեւիկները դեռ ևս սոցիալ-դեմոկրատներ էին, նրանց հետ անկարելի էր բերան բանալ ազգութեանց եւ նրանց քաղաքական դատերի մասին։

Նախապատերազմեան բոլցեւիկմը լըջօրէն այդ հարցերով զբազուելը աւելորդ աշխատանք էր համարում։

Այն ըմբռնումն էր իշխողը թէ ընկերվա-

րութիւնն անմիջական աղերս չունի ո՞չ ազգութեանց և ո՞չ էլ նրանց դատերի հետ, Ընկերվարութեան նպատակներից գուրս էին նըկատուում այդ կոնֆոնները, որոնք պիտի ապրեն և յարատեն այնքան ժամանակ, որքան ժամանակ ապրում և յարատեն է ինքը մասնատերական տնտեսութեւնը։

Մարքսիզմի թունաւոր ու բացասական ազգեցութիւննը և ո՞չ մէկ հոսանքի վրայ այնքան ներգոր ու չօչափելի չեղաւ, որքան ուսական սոցիալ դեմոկրատիայի։ Քաղաքական և ո՞չ մէկ հոսանք՝ բովանդակ ընկերվարական բանակում — այնքան նախանձեցի հաւատարմութեամբ չ'ընդորինակեց մարքսիզմի տառը՝ փոխանակ սգուն, կմախքացած ֆօրմիւնները՝ փշանակ ներքին իմաստին, որքան նոյն ուռւս սոցիալ-դեմոկրատիան։

Այս այլ անդակ, նեխող ու սպանիչ երկոյթների պատճառները թերեւս պիտի որոնել նաև ուսական կեանքի յնտամիացութեան մէջ։

Մարքսիզմը զուբանի բնոյթն առաւ ուռւսական կեանքի համար։

Մարքսիզմի հանգէպ ցոյց տուած քննական վերաբերումը նկատուեց իբրև սրբապեծիւն և ընկերվար ամէնէն մեծ առաքինութիւնը համարուեց այն հապեային թութակումը, որ ուռւս սոցիալ-դեմոկրատները թոյլ էին առջիս իրենց՝ հիմնադիրների խօսքերը և ոյնութեամբ ու տալուկալիօրէն շարունակ

Կրկնելով :

Նաև սրանով պէտք է բացատրել այն թշնամական վերաբերութը, որ ոռւսական սոցիալգուկրատները ունեցան դէպի ազգային հարցը : Այս թշնամութիւնն այսքան բացայացներ և մարքսիզմի ազգեցութիւնն արնքան հզօր ու տիրական, որ մինչև իսկ ոռւսական իրականութիւնը, այդ բազմացեղ, բազմալեզու և բազմակրօն երկիրն իր ազգային բացառիկ գունեղութեամբ բնաւ որոնումների խթան չեղաւ «գոգմա»-ին փարած ոռւս մարքսիստական մտքի համար :

Անկատ չանցաւ, ի հարկէ, նաև արն հանգամանքը, որ ինչպէս ճշտօրէն նկատում է իր զրգոյներից մէկի մէջ Պլեխանովը, ոռւս ժողովուրդը գործնականօրէն չզգաց և չապրց—թէ՛ զիբքով ու թէ՛ թւով—ազգային հարցի իմաստը, տիրականօրէն իշխող ոռւս ժողովրդի համար գոյութիւն չունեցաւ ազգային հարցը և նա կարծեց (անշուշտ առաջ և ոչ հիմա), թէ այդ հարցը գոյութիւն չունի նաև ուրիշների համար :

Այդպէս էր սակայն երէկ, անցեալի մէջ, ընդամէնը մի քանի տարիներ առաջ :

Մասնաւորաբար մեծ պատերազմն ու յատկապէս հոգեմբերեան յեղաշրջումը հիմնի վեր զրին ամէն ինչ զաղափարների և հասկացողութիւնների նաև այս բնադաւառում :

Ոռւսական սոցիալ-դեմոկրատիան, յան-

ձինս բոլշեւիզմի, Սուրբ Հոգու մէկ չարանձի ներշնչումով դարձաւ ամէնէն «հաստատակամ», «անվերապահ» և «մոլի» պաշտպահն ազգութեանց և նրանց դարերի :

Միանգամ ընդմիշտ մոռցուեցան ոռւս և հայ բոլշեւիկների այն թօֆովանքները, որով ազգերն իրաւունք ունէին «ինքնորոշուելու» միայն... ինչ որ անորոշ, անբովանդակ ու անջիղ «կուլառուրական» պէտքերի համար, իսկ աւելին... յանցագործութիւն էր արդէն, անարգանք՝ և յեղափոխութեան և՛ ընկերվարութեան հասցէին :

Անյայտութեան ծոցից ազգեր ծնունդ առին (ամրողջ տաննեակներով, մեծաքանակ ազգանքի ձեւով) և «լիազօրուեցին» անկախ կեանքի ամէնէն բացարձակ իրաւունքներով :

Ազգային ամէնէն վառ երեւակայութիւնն իսկ ոռւսահպատակ ազգերի համար չէր գծել ինքնօրէն կեանքի այնքան ընդարձակ հորիզոններ, որպիսին արաւ ոռւսական սոցիալդեմոկրատիայի բոլշեւիկեան թեր :

Արաւ անշուշտ խօսքով, առ այժմ ոչ անկեղծօրէն, պարզապէս իարդախ և ստոր նկատումներով :

Սակայն մեզ հետաքրքրողը այդ չէ :

Կարեորը՝ քննութեան ենթակայ հարցի լուսաբանութեան տեսակէտից այն է, որ գաղափարօրէն տեղի տուաւ ազգերի յաղթական երթի առջենա՛կ ոռւսական բոլշեւիզմը,

Տեսական և գործնական պայքարի մէջ պարտուեց նա, թափեց իր հին ու մաշած զէնքերը և անձնատուր եղաւ այն տարերքին, որ ազգութիւնների կենսալիք, հոյակապ ու հրաշագեղ վերածնունդ է կոչւում:

Փոյթ չէ, թէ ոռւսական աշխարհակալութիւնը վերահաստատելու համար, բոլեւիզմ այսօր պարզապէս կեղծում ու ստում է, յայտարարելով իրեն իրրե պաշտպան ազգային դատերի:

Կարեորը, էականն ու նշանակալիցը այն է, որ նա գաղափարօրէն այլես ոյժ չի զգում իր մէջ, անցեալի նման հրապարակով դէմ արտայատուելու ազգային դատերին: Իսկ այս արդէն չափազանց մեծ ու խոստմնալից յաղթանակ է ինքնին:

Ազգերի ազատազրութիւնն ու նրանց անկախութեան գաղափարը այսպիսով սկսւում է տիրականօրէն իշխել բոլոր այն հոսանքների վրայ, որոնք իրենց հոգեոր սնունդը շարունակում են առնել—իաստօրէն կամ անուանապէս—ընկերվարութեան գաղափարական աւազանից:

Այսօր համարձակ կարող ենք յայտարարել, որ ազգութիւնները մարդկալին մէկ հատուածի մէջ, ընկերվար բանակում, բացայստ թշնամիներ այլես չունեն:

Ով իրեն ընկերվարական է յայտարարում և միաժամանակ շարունակում ատամ կրնտա-

ցնել վերածնուող և անկախութեան ձգտող ազգերի դէմ՝ նա այդ անում է քօղարկուած ձեռվ, զաւում ու զաւալրում է ծպտեալ վիճակի մէջ, ժահը ու ժանդ է թափում խարդախ, ստոր ու կեղծ ճանապարհներով:

Բաց ու բացնակատ պայքար, ընկերվար գրօշի տակ, այլես անկարելի է ազգերի դէմ տանել:

Այլես չկան «խղճուկ», «անօդնական», «եղագլուխ» ու «ըէակցիոն» ազգեր, այլ կան ընդհանրապէս ազգեր, ամենքն էլ, ըստ կորանի գեղեցիկ խօսքի, Աստուածանից այս աշխարհի վրայ, ամենքն ալ արժանի անկախութեան և ազատութեան:

Այլես պէտք չկալ անպայման 12 միլիոն դառնալու, որպէսզի «գոգման» տուեալ ազգութիւնն արժանի համարի անկախութեան, այլ կարելի է 12 միլիոնից 12 անգամ քիչ լինել թւով ու նորէն իրաւունք և պարտականութիւն ունենալ ձգտելու հշմարիտ և լիակատար ազատութեան և անկախութեան:

Այդ իրաւունքն ու պարտականութիւնն ունի նաև հայ ժողովուրդը:

Պայքարել յանուն Հայաստանի անկախութեան, այդ կը նշանակէ ջահակիրը լինել աշխատաւոր մարդկութեան լուսաւոր զաղափարների, այդ կը նշանակէ՝ զօրավիդ հանդիսանալ այն վեհ ու գեղեցիկ պայքարին, որ այսօր տարւում է ընկերվար գրօշի տակ:

Հայաստանի անկախութեան պահանջը բըղ-
խում է պատմական անցքերի խորհրդաւոր
ընթացքից, այն վեհ սկզբունքից, որ ազգե-
րը՝ ստորագաս ու անազատ՝ մղում ու տա-
նում է դէպի լուսաշող ապագայ, ուր չկան
իշխող և իշխող ազգեր, այլ կան հաւասար
ազգեր։

Հայաստանի անկախութեան պահանջը
թելդրանքն է ճշմարիտ ընկերվարութեան,
որ ձգտում է և կարող է իրականանալ ազատ
ազգերի ծոցում և ոչ նրանց գերեզմանի վր-
բայ։

Անկախութեան է ձգտում նաև ինքը,
աշխատաւոր ու նահատակ հայ ժողովուրդը։

Որովհետեւ միայն անկախութեան պայ-
մաններում մեր երկիրը կարող է Հայաստան
դառնալ, իսկ մեր ժողովուրդը՝ հայ մնալ։

Անկախութեան պայմաններում է միայն,
որ հայ ժողովուրդը կարող է ազատօրէն ըս-
տեղծագործել և պատմականօրէն ժառանգած
իր բեղմնաւոր ժամանակութիւններով ճո-
խացնել ապագայ ընկերվար հասարակակարգը։

Միայն իրապէս անկախ Հայաստանն է,
որ միանգամ ընդմիշտ վերջ կը տայ հզօրնե-
րի արիւնուշտ և աշխարհակալ կոփեներին՝
հայկական հողերի վրայ։

Որովհետեւ քանի գեռ հայ ժողովուրդը չէ
տիրացած իր նուիրական սեփականութեան,
մինչ այդ աշխարհակալ և արիւնալի պայքար-

ները հզօրների միջև անպակաս պիտի լինեն
մեր հայրենիքի շուրջ, այդ հայրենիքին՝ այտ
res nullius-ին՝ ոչ ոքի պատկանող իրին տի-
րանալու համար։

Ինչպէս ամէն տեղ, այնպէս նաև մեր հայ-
րենիքի մէջ հզօրների աշխարհակալ թուրք մի-
անգամ ընդմիշտ կը ջախջախուի, եթէ միայն
հայկական հողերի վրայ կեանք առնի մարտըն-
չող հայութեան գարաւոր երազը, նրա ան-
կախութեան շէնքը։

Միայն այդ ժամանակ տեսական կը լինի
խաղաղութիւնը մեր երկրում, ազատութեան
արևը միայն անկախութեան երկնակամարից
ճշմարտօրէն կը լուսաւորի մեր հայրենիքի գո-
յութեան ուղիները, միայն անկախութեան
պայմաններում հայութիւնը կը ստեղծագոր-
ծի և մէկ անսախրնթաց թափով կը լծուի եր
լուսաւոր պայքարին։

Ահա թէ ինչու անկախութեան պահանջը
աշխատաւոր հայ ժողովրդի նուիրական նպա-
տակներից մէկը պիտի դառնայ։ Նա պիտի
ազմի հայ ընկերվար մտքի անբաժան սե-
փականութիւնը և, իբրև այդպիսին, իբ-
րև մէկ տեսական և մնայուն արժէք, տե-
սւորուի նաև հայ կեանքի հզօր ընկերվար
հոսանքի՝ Հ. Յ. Դաշնակցութեան դաւանա-
գրի առաւելագոյն բաժնի մէջ։

Աշխարհակալ բոլշեվիզմի դաւադիր խա-
ղերը ստորագաս ազգերի ու նաև Հայաստանի

ST. NERSES SHNORHALI

LIBRARY - 56 -

ARMENIAN PRELACY

անկախութեան գաղափարի հետ ինքնին դալիս
են ասելու , որ Հայաստանը հաստատ քայլ-
ուածքով ոտք կը գնի ճշմարիտ վերածննդի
ձանապարհի վրայ այն ժամանակ միայն ,
երբ նա իրապէս ազատ և անկախ կը լինի :

Ահա պայքարի այն միակ ռւզին , որ գը-
ծուած է մեր վերածնուող հայրենիքի առջեւ :

Զգտել Հայաստանի անկախութեան . պայ-
քարել այդ անկախութեան համար և տիրա-
նալ նրան , —այդ կը նշանակէ մէկ լուսաւոր
յաղթանակով ևս պատկել մարդկային պատ-
մութիւնը , լաւագոյն տուրքը տալ ընկերվար
վարդապետութեան , սկիզբը գնել Մերձաւոր
Արևելքի իրական աղատագրութեան և անգորր ,
ազատ ու խաղաղ պայմանների մէջ հայու-
թիւնը լծել իր լուսաւոր և սաեղծագործ ա-
ռաքելութեան :

Քանի այս չէ եղած . — պատրանք է , սին ու
դատարկ ցնորք , պարզ երազ միայն այն ա-
մէնը , ինչ հիւսւում է մեր հայրենիքի ու մեր
ժողովրդի վերածնունդի շուրջ :

Ու որպէսզի դարերի թելագրանքն ու սե-
րունդների երազն իրականութիւն գառնայ ,
պէտք է , անհրաժեշտօրէն պէտք է որ ան-
կախութեան պահանջը մարտնչող հայութեան
քաղաքական տեսակէտը դառնայ :

Քառնա՞յ այն կէտք . որտեղից բացւում են
հայ ժողովրդի առջեւ պատմութեան ընդամենք ,
լուսաշող ու վարդապետութեան ընդամենք :

ԱՐՄԵՆԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ՀՀ Ազգային գրադարան



NL0354232

ԳԻՆ 75 ՍԱՐՏԻՄ